

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

Բարձրագոյն հրովարտակ յանուն Գերագոյն Զօրահրամանատար Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի։

Ձերդ Կայսերական Բարձրութիւն. Պատերազմական գործողութիւնների սկսելու պատճառով, համապետական ընոյթ ունեցող հանգամանքներն Ինձ հնարաւորութիւն չը տուին հետևելու Իմ հոգու ձգտմանը՝ իսկոյն և եթ անձամբ անցնել բանակի գլուխը, ուստի ցամաքային և ծովային բոլոր ոյժերի բարձրագոյն հրամանատարութիւնը յանձնեցի Ձերդ Կայսերական Բարձրութեան։ Ամբողջ Ռուսաստանի առաջ Ձերդ Կայսերական Բարձրութիւնը ցոյց տուեց անսասան քաջութիւն՝ առաջ բերելով Իմ և բոլոր ռուս մարդկանց կողմից խորին վստահութիւն և մաղթանքներ, որոնք անդաւաճան կերպով ուղեկցում էին Ձեր անունը՝ ռազմական անխուսափելի փորձութիւնների ժամանակ։

Ի վերուստ Ինձ յանձնուած հայրենիքի արքայական պարտիքը հրամայում է Ինձ այժմ, երբ Թշնամին մեր կայսրութեան սահմանների խորն է մտել, ռազմի դաշտ եկած զօրքերի Բարձրագոյն հրամանատարութիւնը յանձն առնել և բաժանել Իմ բանակի ռազմական նեղութիւնները և նրա հետ միասին փորձանքից պաշտպանել ռուսական երկիրը։

Աստուծոյ գործերն անիմանալի են, բայց Իմ պարտքն ու ցանկութիւնս Իմ այդ որոշումն անյողդողդ են դարձնում՝ պետական օգտակարութեան նկատումներով։

Թշնամու ուժեղացած գրոհը արևմտեան զօրաճակատից առաջադրում է սերտօրէն կենտրոնացնել բոլոր զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները նաև միացնել ռազմական հրամանատարութիւնը պետութեան կառավարական բոլոր մասերի հետ, այդպիսով ուշադրութիւնը գրաւելով մեր հարաւային ռազմաբեմից։

Հանգամանքների դասաւորութեան շնորհիւ ընդունելով անհրաժեշտութիւնը Ձեր օգնութեան և խորհուրդների՝ մեր հարաւային ռազմաբեմի վերաբերեալ, Ձերդ Կայսերական Բարձրութեանը նշանակում եմ Իմ փոխարքան Կովկասում և գլխաւոր հրամանատարը կովկասեան քաջարի բանակի, արտայայտելով Ձերդ Կայսերական Բարձրութեան՝ Ձեր բոլոր ռազմական աշխատանքների համար՝ Իմ և հայրենիքի խորին շնորհակալութիւնը։

Մնամ դէպի Ձեզ անփոփոխ բարեհաճ՝

Իսկականի վրայ Նորին Մեծութեան ձեռքով գրուած է:

Եւ Ձեզ անկեղծօրէն և սրտագին սիրող

«ՆԻԿՈԼԱՅ»

Արքայական կայան,

23 *օգոստ.* 1915 *թ.*